ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 727-Ա/2 **«25» մարտ 2025 թ.**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ - 2025» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգի» 14-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի N 2314-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2025 թվականի մարտի 19-ի նիստի N 25IRF/25PostDoc-3 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում - 2025» մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

1) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,

2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

3) ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ֆինանսավորումը սկսել պայմանագրերով նախատեսված ժամկետներում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«25» մարտ 2025 թ.
N 727-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ - 2025»
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

	Ծածկագիր	Ղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1	25IRF-1C001	Զարգարյան Դավիթ	Տիեզերական Պեվատրոների ուսումնասիրությունը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	157000.0
2	25IRF-1C002	Շահբազյան Շանթ	Առաջին սկզբունքների մշակում բազմակազմիչ խտության ֆունկցիոնալ տեսություն՝ շեշտը դնելով իր կիրառությունը տարաշխարհիկ նյութի և տարաշխարհիկ քվանտային վիճակների համար	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	134000.0
3	25IRF-1F003	Վավիլովա Վալերիա	BOMPAR – Իշամեղուների մակաբույծների և պաթոգենների բռնկումների մոդելավորում կլիմայի փոփոխության տարբեր սցենարների ներքո և ադապտացիոն պլանների մշակում՝ մեղմելու բնական էկոհամակարգերի և գյուղատնտեսության համար բացասական հետևանքները	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	157000.0